

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱՂԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԼՂՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և նրա ստորաբաժանումների կողմից 2013 թվականին որոշակի աշխատանք է կատարվել համակարգի առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման ուղղությամբ:

Շարունակվել է գործունեությունը ԼՂՀ օրենսդրության կատարելագործման, դատաիրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման ուղղությամբ:

2013 թվականին նախարարության կարևոր խնդիրներն են հանդիսացել մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը և իրականացումը, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը և համակարգի ստորաբաժանումների գործունեության բարելավումը:

Հաշվետու ժամանակահատվածում միջոցներ են ձեռնարկվել համակարգի սոցիալ-տնտեսական զարգացման, գործունեության բարեփոխման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման ուղղությամբ:

Գործուն և սիստեմատիկ բնույթ է կրել համակարգի ստորաբաժանումների գործունեության նկատմամբ տարվող հսկողությունը, դրա կազմակերպչական և մեթոդական կառավարումը, պրակտիկ օգնության ցուցաբերումն ու ստուգումների իրականացումը, վերհանված թերությունների և բացթողումների քննարկումն ու դրանց վերացման համար համապատասխան միջոցների կիրառումը:

ԼՂՀ վարչապետի 2013 թվականի փետրվարի 1-ի թիվ 3 արձանագրային հանձնարարականի համաձայն ԼՂՀ արդարադատության նախարարը և նրա տեղակալը մասնակցել են համայնքների կողմից հրավիրված հաշվետու ժողովներին, որի արդյունքում տեղ գտած հիմնախնդիրների մասին կազմվել են համապատասխան տեղեկանքներ: Այցելություններ են ունեցել նաև նախարարության Հաղորթի, Մարտունու և Մարտակերտի նոտարական տարածքներ, ՔԿԱԳ, Պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումներ, որտեղ քննարկվել են առկա խնդիրները, իսկ կատարված առաջարկությունների վերաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ:

2013 թվականի հունվար և ապրիլ ամիսներին տեղի է ունեցել օտարերկրյա քաղաքացիների կողմից ԼՂՀ քաղաքացիներ հանդիսացող երեխաների որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի 2 նիստ, որի արդյունքում որդեգրելու ցանկություն հայտնած անձանց տրվել են դրական եզրակացություններ:

2013 թվականին նախարարի մոտ կազմակերպվել է 75 քաղաքացիների ընդունելություն:

2013 թվականի մարտ ամսում արդարադատության նախարարն ընդունել է Կանադայի քաղաքացի, միջազգային փաստաբան՝ Շեյն Հիդ Բրեյդիին և Հայաստանի Հանրապետության փաստաբան՝ Ելենա Մարգարյանին, որի արդյունքում քննարկվել են մարդու և քաղաքացու Սահմանադրական իրավունքները՝ հանձինս մտքի, խղճի և դավանանքի ազատության սահմանադրական իրավունքների:

Նույն ամսում արդարադատության նախարարն ընդունել է նաև «Դատական Փորձաքննությունների Լաբորատորիայի» ՊՈԱԿ աշխատակիցներին, որի արդյունքում քննարկվել են առկա խնդիրները:

2013 թվականի ապրիլ ամսում ավարտվել են իրավական տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները: 2013 թվականի ապրիլ ամսում ՀՀ Պաշտոնական

տեղեկագրի ՓԲԸ աշխատակիցների հետ միասին տեղի է ունեցել ԼՂՀ իրավական տեղեկատվական համակարգի «arlexis.am» կայք էջի շնորհանդեսը:

Նույն ամսում արդարադատության նախարարն ընդունել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պատվիրակությանը՝ արդարադատության նախարարի գլխավորությամբ: Տեղի է ունեցել գործնական հանդիպում, որի արդյունքում քննարկվել են երկու նախարարությունների համագործակցության հիմնական ուղղությունները և դրա շրջանակներում գոյություն ունեցող հիմնախնդիրներն ու դրանց հնարավոր լուծումները:

2013 թվականի մայիս ամսում արդարադատության նախարարը մասնակցել է ԼՂՀ Ազգային ժողովում կազմակերպված՝ Հայաստան-Արցախ միջխորհրդարանական համագործակցության ծրագրի շրջանակներում տեղի ունեցած ՀՀ եւ ԼՂՀ խորհրդարանների արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովների համատեղ խորհրդատվական քննարկումներին, որի հիմնական թեման խորհրդարանական դիվանագիտության հնարավորություններն ու խնդիրներն էին, ինչպես նաև ԼՂՀ կողմից միջազգային կոնվենցիաների իրավագործությունը ճանաչելն ու միակողմանի միանալը:

2013 թվականի հուլիսի 3-ից 5-ը արդարադատության նախարարը մասնակցել է «Իրավունքի գերակայության Եվրոպական չափորոշիչները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում» խորագրով Երևանյան 18-րդ միջազգային խորհրդաժողովին: Նույն թվականի հուլիսի 5-ից 6-ը նախարարը մասնակցել է նաև «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» խորագրով իրավաբանների համահայկական երկրորդ համաժողովին:

Կառավարության 2013 թվականի գործունեության ծրագրով նախատեսված և զարնանը մեկնարկած համայնքների ղեկավարների վերապատրաստման դասընթացների շրջանակներում՝ 2013 թվականի նոյեմբերի 4-ին արդարադատության նախարարն անց է կացրել դասախոսություն, որը նպատակ ուներ համայնքների ղեկավարներին հիմնովին ծանոթացնել ԼՂՀ Սահմանադրությանը և նրա նշանակությանը երկրի քաղաքական և հասարակական հարաբերություններում:

2013 թվականի նոյեմբերի 8-ին արդարադատության նախարարի հրավերով նախարարություն է ժամանել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի գլխավորած պատվիրակությունը: Նախարարության և ՀՀ փաստաբանների պալատի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ առաջիկայում համագործակցության հուշագիր կնքելու վերաբերյալ:

2013 թվականի նոյեմբերի 19-ին նախարարությունն առաջին անգամ կազմակերպել է սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգում, որի արդյունքներով ստուգումն անցած է ճանաչվել մեկ մասնակից, ում տրվել է սնանկության կառավարչի որակավորման վկայական:

Նախարարության և նրա մեջ ընդգրկված ստորաբաժանումների կողմից 2013 թվականին հոգուտ պետական բյուջեի գանձվել է **123.833.640 (83.477.135) դրամ գումար**: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի օգտին գանձված գումարն աճել է 40.356.505 (4.478.463) դրամի չափով:

Ղատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում պետական բյուջեի օգտին գանձված գումարների մասով արձանագրվել է աճ, իսկ քաղաքացիական կացության ակտերի գրանցման, նոտարիատի և իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտներում՝ նվազեցում:

Նախարարության համակարգում ընդգրկված ստորաբաժանումների գործունեությունն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.

## **1. Նախարարությունում ստացված փաստաթղթերի շրջանառության, քաղաքացիների դիմումների և բողոքների քննարման ոլորտ**

**Արդյունքները:** 2013 թվականին նախարարությունում մուտքագրվել են 5337 (4478)<sup>1</sup> նամակ-գրություններ, որոնցից 64-ը (71)՝ քաղաքացիների կողմից:

Նշված բոլոր դիմումները, նամակ-գրություններն օրենքով սահմանված կարգով ընթացքավորվել են:

Առօրյա բնույթ են կրել քաղաքացիների ընդունելությունները, նրանց իրավական օգնություն ցուցաբերելու աշխատանքները:

Աշխատանք է տարվել բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց և նրանց առաջին հերթի ժառանգներին պարզաբանումներ տալու, ստացված դիմումները հաշվառելու և ընթացքավորելու, համապատասխան կարգավիճակ ստացած անձանց վկայականներ տրամադրելու ուղղությամբ: Նախարարությունում հրավիրվել և անց է կացվել բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց կամ նրանց առաջին հերթի ժառանգներին վկայականներ տվող հանձնաժողովի 2(3) նիստ, որի արդյունքում 9 (14) քաղաքացու շնորհվել է բռնադատվածի կարգավիճակ:

## **2. Կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման ոլորտ**

**Արդյունքները:** Հաշվետու ժամանակահատվածում աշխատանք է տարվել կադրերի ընտրության, նրանց ստաժավորման, ատեստավորման և որակավորման բարձրացման կազմակերպման ուղղությամբ:

Կազմվել ու հաստատվել է նախարարության աշխատողների 2013 թվականի աշխատանքային արձակուրդների ժամանակացույցը: «Ազատ Արցախ» թերթի և ԼՂՀ հանրային հեռուստառադիոընկերությանն է ներկայացվել ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության ՔԿԱԳ Քաշաթաղի տարածքային բաժնի առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ հայտարարությունը:

Օրենքով սահմանված կարգով «Ազատ Արցախ» թերթի, ԼՂՀ հանրային հեռուստառադիոընկերությանն ու ԼՂՀ քաղաքացիական խորհուրդ է ներկայացվել նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և պաշտոնական հրատարակման վարչության իրավական ակտերի փորձաքննության բաժնի առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ հայտարարությունը: Տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարության զինապարտ (20-55 տարեկան) տղամարդկանց և տվյալներ՝ նախարարության աշխատակազմի հաշվեկշռում գտնվող ավտոմեքենաների քանակի վերաբերյալ:

Նախարարության կողմից կազմակերպվել և անց են կացվել ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմնի առաջատար մասնագետի (կող՝12-3.2-1) և աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի առաջին կարգի մասնագետի (կող՝12-4.1-6) ատեստավորումները:

Կազմվել ու ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ է ներկայացվել 2014 թվականին ատեստավորման ենթակա նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների մասին տեղեկությունները:

---

<sup>1</sup> Փակագծերում նշված են 2012 թվականի տվյալները

ԼՂՀ քաղաքացիական խորհրդի համաձայնեցմանն են ներկայացվել նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում կատարված փոփոխությունները:

ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ են տրամադրվել 2013 թվականի մարտի 1-ի դրությամբ նախարարության աշխատակազմի նոր նշանակված (Ձև N 7) և քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայողների (Ձև N 9) մասին տեղեկությունները:

Աշխատանք է տարվել աշխատակիցների անհատական տվյալների և եկամուտների հայտարարագրերի լրացման գործընթացի կատարման ուղղությամբ:

Պաշտոնում նոր նշանակված աշխատակիցների համար ստեղծվել են անձնական գործեր, կնքվել համապատասխան աշխատանքային պայմանագրեր և տրվել վկայականներ:

**Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:** Կադրային քաղաքականության ոլորտում հիմնախնդիրը որակյալ և արհեստավարժ կադրերի պակասությունն է: Այս բնագավառում նախատեսվում է առավել խիստ պահանջներ սահմանել կադրերի ընտրության, պատրաստման, վերապատրաստման, մրցույթների և ատեստավորումների կազմակերպման գործընթացների համար: Հաշվի է առնվելու անձի ոչ միայն բարձր մասնագիտական պատրաստվածությունը, այլ նաև համապատասխան պաշտոնում գործելու ունակությունը և բարոյական հատկանիշները:

### **3. Իրավական ակտերի նախագծերի մշակման, փորձաքննության և պաշտոնական հրապարակման ոլորտ**

**Արդյունքները:** 2013 թվականին նախարարության կողմից մշակվել են ԼՂՀ 17 (11) օրենքների, ԼՂՀ Նախագահի 1 կարգադրության, ԼՂՀ կառավարության 11 (13) որոշումների և 6 (9) գերատեսչական նորմատիվ ակտերի նախագծեր :

Հաշվետու ժամանակահատվածում նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով ընթացքավորվել են 1.«ԼՂՀ-ում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ի կոնվենցիայի, 2.«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» և 3.«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» 1966 թվականի դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագրի և դրանց կից արձանագրությունների իրավագործությունը ճանաչելու մասին», 4.«ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», 5.«Փաստաբանության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», 6.«ԼՂՀ քրեական օրենսգրքի նախագծի», 7.«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», 8.«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», 9.«Հանրային ծառայության մասին», 10.«Քաղաքացիական ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 11.«ԼՂՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», 12.«ԼՂՀ դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», 13.«Դատական ծառայության մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին, 14.«Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», 15.«ԼՂՀ քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», 16.«ԼՂՀ միջազգային պայմանագրերի մասին», 17.«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին», ԼՂՀ օրենքների, 1.«ԼՂՀ իրավական և դատական բարեփոխումների 2013-2017 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող

միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ԼՂ՝ Նախագահի Կարգադրության, 1.«ԼՂ՝ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 10-ի N730-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», 2.«ԼՂ՝-ում իրավական տեղեկատվական անվճար համակարգի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին», 3.«ԼՂ՝ նոտարական գրասենյակների համար դեպոզիտային հաշիվներ բացելու թույլտվություն տալու մասին», 4.«ԼՂ՝ կառավարության 2007 թվականի հունիսի 26-ի N283 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», 5.«Հրապարակային սակարկությունների մասին» ԼՂ՝ օրենքի 29-35-րդ հոդվածներով նախատեսված հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման դեպքերը սահմանելու մասին», 6.«ԼՂ՝ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 26-ի N461 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», 7.«ԼՂ՝ դատական փորձաքննությունների լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց առաջադրանքների, ինչպես նաև քաղաքացիական կամ վարչական գործերով դատարանների որոշումների հիման վրա մատուցվող ծառայությունների դիմաց գոյացած ֆինանսական միջոցների օգտագործման կարգը հաստատելու մասին», 8.«ԼՂ՝ դատական փորձաքննությունների լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող փորձաքննությունների գների հաշվարկման կարգը հաստատելու մասին», 9.«Ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» թվով 5, 10.«Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու մասին և ԼՂ՝ կառավարության 2011 թվականի օգոստոսի 23-ի N 16/16 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և 11.«ԼՂ՝ կառավարության 2010 թվականի հունիսի 15-ի N306 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂ՝ կառավարության որոշումների նախագծերը:

2013 թվականի ընթացքում մշակվել և նախարարի հաստատմանն ու պետական գրանցմանն են ներկայացվել 1.«Հարկադիր էլեկտրոնային աճուրդի հրապարակային ծանուցման և մասնակիցների գրանցման կարգը սահմանելու մասին», 2.«Հարկադիր էլեկտրոնային աճուրդներից «Հրապարակային սակարկությունների մասին» ԼՂ՝ օրենքի 29-35-րդ հոդվածներով նախատեսված հարկադիր աճուրդների անցման կարգը սահմանելու մասին, 3.«Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին», 4.«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության առաջատար խմբի պաշտոններին հավասարեցված այլ պաշտոնների անվանացանկը սահմանելու մասին», 5.«ԼՂ՝ արդարադատության նախարարության աշխատակազմի ներքին գործավարության կարգը հաստատելու և ԼՂ՝ արդարադատության նախարարի 2006 թվականի մարտի 15-ի N41 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» և 6.«ԼՂ՝ արդարադատության նախարարի 2007 թվականի հուլիսի 16-ի թիվ 102 հրամանում լրացում կատարելու մասին» գերատեսչական նորմատիվ ակտերը:

Հաշվետու ժամանակահատվածում օրենսդրական ակտերի պետական իրավական փորձաքննության ոլորտում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է 27,3 տոկոս աճ, այսպես. 2013 թվականին պետական իրավական փորձաքննության են ենթարկվել թվով 708 (556) ԼՂ՝ օրենսդրական ակտերի նախագծեր, որոնցից 123-ը (41)՝ ԼՂ՝ օրենքների, 1-ը ԼՂ՝ Նախագահի հրամանագրի, 1-ը ԼՂ՝ Նախագահի կարգադրության, 576-ը (505)՝ ԼՂ՝ կառավարության որոշումների և 7-ը (10)՝ ԼՂ՝ վարչապետի որոշումների:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման են ենթարկվել թվով 148 (152) գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր, իսկ 6-ի (9) գրանցումը մերժվել է՝ ԼՂ՝ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու հանգամանքներով պայմանավորված:

Պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման են ենթարկվել տեղական ինքնակառավարման մարմինների թվով 182 (229) նորմատիվ իրավական

ակտեր, իսկ 4-ի (5) գրանցումը մերժվել է՝ ԼՂՀ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու հանգամանքներով պայմանավորված:

2013 թվականի ընթացքում հրատարակվել են թվով 26 (30) «ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի» պարբերականներ, ընդ որում՝ 27/217/, 28/218/, 29/219/ համարները 2012 թվականից տեղափոխվել են 2013 թվական, ինչպես նաև «ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» թվով 20 (21) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածուի» թվով 8 (8) պարբերականներ:

Նախարարության կողմից ազատ կարգով իրացվել է 470 տեղեկագիր, որից ստացված **978.578** (955.856 ) դրամ գումարը փոխանցվել է պետական բյուջե:

#### **4. ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության գործունեության կազմակերպում**

**Արդյունքները:** 2013 թվականին ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել գործակալության առջև դրված խնդիրների և գործառնությունների իրականացման ուղղությամբ:

2013 թվականի առաջին կիսամյակում ստուգման է ենթարկվել ՔԿԱԳ տարածքային բաժինների և նոտարական գրասենյակների 2012 թվականի գործունեությունը: Ստուգմամբ կազմված տեղեկանքները քննարկվել են ԼՂՀ արդարադատության նախարարությունում հրավիրված նիստերում: Արդյունքում կազմվել և գործակալության աշխատակիցներին են ներկայացվել համապատասխան հանձնարարականներ:

2013 թվականի մարտի 8-ի կապակցությամբ գործակալության աշխատակիցները նվերներ ու ծննդյան վկայականներ են տրամադրել ծննդաբերած մայրերին և նորածին երեխաներին:

Հաշվետու ժամանակաշրջանում նախարարությունում ՔԿԱԳ տարածքային բաժնի պետերի մասնակցությամբ կազմակերպվել և անց է կացվել 1 նիստ, որի ընթացքում քննարկվել է ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից օտարերկրյա պետություններ ուղարկվող հարցումների ձևերը:

2013 թվականի երկրորդ կիսամյակում նախարարությունում կազմակերպվել և անց է կացվել նոտարի թեկնածուների 1 մրցույթ՝ նոտարների գործող օգնականների մասնակցությամբ:

2013 թվականին ՔԿԱԳ տարածքային բաժիններում էլեկտրոնային կառավարման նոր համակարգի ներդրմամբ պայմանավորված՝ ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցները գործուղվել են ՀՀ, որտեղ նրանց հետ կազմակերպվել և անց է կացվել համապատասխան դասընթաց: Արդյունքում նշված համակարգերը ներ են դրվել ՔԿԱԳ Ստեփանակերտի և Ասկերանի տարածքային բաժիններում:

Հաշվետու ժամանակաշրջանում առօրյա մեթոդական և կազմակերպչական դեկավարման է ենթարկվել ԼՂՀ նոտարական գրասենյակների և ՔԿԱԳ տարածքային բաժինների ընթացիկ գործունեությունը: Կատարվել է ստացված դատական ակտերի ուսումնասիրություն և հաշվառում:

2013թ. ընթացքում գործակալության արտաբյուջե մտցվել է 11.728.500 դրամ որից՝  
ա/ նոտարական գրասենյակների կողմից - 10.665.500 դրամ,  
բ/ ՔԿԱԳ տարածքային բաժինների և գործակալության  
կենտրոնական մարմնի կողմից - 1.063.000 դրամ:

Գործակալության գործունեությունն ըստ առանձին ոլորտների ունի հետևյալ պատկերը:

#### **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման կազմակերպում**

**Արդյունքները:** Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել քաղաքացիական կացության ակտերի գրանցման ապահովման ուղղությամբ:

Նախարարության կողմից ընթացքավորվել են 254 (261) հարցումներ՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումների պատճեններ, վկայականների կրկնօրինակներ և ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքներ ստանալու մասին, ինչպես նաև տրվել են 216 (162) ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքներ, որոնց դիմաց գանձվել է 175.000 (153.000) դրամ պետական տուրք:

ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից ներկայացրած ծննդյան, ամուսնության ակտերի գրանցման վերականգնման, անվան, հայրանվան, ազգանվան փոխման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ուղղման, փոփոխման և լրացման վերաբերյալ նյութերը մանրակրկիտ ուսումնասիրվել, ստուգման են ենթարկվել, որի արդյունքում հաստատվել են 196 (169) եզրակացություններ: Նշված եզրակացություններից 32-ը (31) վերաբերվում է ակտերի գրանցման վերականգնմանը, 49-ը՝ (39) անվան, հայրանվան, ազգանվան փոխմանը և 115-ը՝ (99) ակտային գրանցումների ուղղմանը, փոփոխմանը և լրացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել և համապատասխան ՔԿԱԳ տարածքային բաժիններ են առաքվել օտարերկրյա քաղաքացիների ամուսնության գրանցման թույլտվության 30 (27) նյութեր:

ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքային գործունեության մասին վիճակագրական տվյալների վերլուծությամբ պարզվել է, որ վերջիններիս կողմից 2013 թվականին կատարվել են 5.291 (5.032) քաղաքացիական կացության ակտային գրանցումներ: Բացի այդ, տրվել են 1.184 (1.349) կրկնօրինակ վկայականներ և 992 (1.252) տեղեկանքներ՝ ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին, ինչպես նաև վկայականի կրկնօրինակ ստանալու համար այլ ՔԿԱԳ տարածքային բաժիններ են ուղարկվել 40 (27) ծանուցումներ:

Նշված գործողությունների դիմաց գանձվել է **9.015.000 դրամ պետական տուրք** (9.136.500 դրամ):

Քաղաքացիական կացության ակտային գրանցումների ընդհանուր քանակից 2.380-ը (2.521) վերաբերում է ծննդյանը, 1.344-ը՝ (1.232) մահվանը, 962-ը՝ (872) ամուսնությանը, 185-ը՝ (147) ամուսնալուծությանը, 173-ը՝ (206) հայրության հաստատմանը, 4-ը՝ (6) որդեգրմանը, 48-ը՝ (34) անվան, հայրանվան, ազգանվան, փոխմանը, 125-ը՝ (125) ուղղմանը, 37-ը՝ (47) ակտային գրանցումների վերականգնմանը:

**Քաղաքացիական կացության ակտերի գրանցումը ըստ ՔԿԱԳ տարածքային բաժինների պատկերվում է հետևյալ կերպ.**

ՔԿԱԳ բաժնի անվանումը	Ծնունդ	մահ	ամուսնություն	ամուսնալուծություն	հայր ճանաչում	որդե գրում	ուղղում	ա.ա.հ փոխում	ակտի վերականգ	տեղեկանք	կրկնօրինակ	Ժանուցում	ընդամենը	պետտուրք
Ստեփանակերտ	990	486	418	89	75	3	54	26	11	431	386	9	2.978	3.680.000
Ասկերան	242	180	98	28	24	-	37	4	4	134	125	2	878	1.143.000
Մարտակերտ	311	221	94	19	38	1	18	2	5	209	317	5	1240	1.714.000
Մարտունի	337	257	155	22	16	-	1	6	8	85	196	-	1083	1.137.000
Հաղրուք	183	114	36	8	17	-	12	2	4	86	114	3	579	654.000
Շուշի	77	38	49	7	7	-	2	2	2	28	10	1	223	211.000
Շահումյան	61	15	25	1	10	-	-	2	2	8	1	12	137	106.000
Քաշաթաղ	179	33	87	11	19	-	1	4	1	11	35	8	389	370.000
<b>Ընդամենը</b>	<b>2380</b>	<b>1344</b>	<b>962</b>	<b>185</b>	<b>206</b>	<b>4</b>	<b>125</b>	<b>48</b>	<b>37</b>	<b>992</b>	<b>1184</b>	<b>40</b>	<b>7.507</b>	<b>9.015.000</b>

ՔԿԱԳ հանրապետական արխիվի կողմից 2013 թվականին տրվել են 145 վկայականների կրկնօրինակներ (102), այդ թվում՝ 118-ը ծննդյան (76), 11-ը՝ մահվան (8), 14-ը՝ ամուսնության (17), 2-ը՝ ամուսնալուծության, ինչպես նաև 623 (531) ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքներ, որոնց դիմաց գանձվել է 267.000 դրամ պետտուրք (228.000):

Այսպիսով, 2013 թվականին ՔԿԱԳ տարածքային բաժինների և ՔԿԱԳ հանրապետական արխիվի կողմից հոգուտ պետական բյուջեի գանձվել է 9.282.000 դրամ (9.364.500):

**Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:** Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում կարևորագույն խնդիր է հանդիսանում որոշ պետությունների ՔԿԱԳ մարմինների կողմից ԼՂՀ-ում տրամադրված ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանքների չճանաչումը, որի հետևանքով մեր քաղաքացիները զրկվում են այդ պետություններում ամուսնություն գրանցելու հնարավորությունից: Խնդրին նախատեսվում է լուծում տալ այլ երկրների արդարադատության մարմինների հետ կապերի և փոխհարաբերությունների հաստատման միջոցով:

Ստեփանակերտի ՔԿԱԳ տարածքային բաժինը շենքային պայմանների բարելավման կարիք ունի:



## Նոտարական գործունեության կազմակերպում

**Արդյունքները:** Հաշվետու ժամանակահատվածում միջոցներ են ձեռնարկվել նոտարական գործունեության կազմակերպման ուղղությամբ:

Նախարարության կողմից իրականացվել է նոտարական վիճակագրության ամփոփում և պրակտիկայի ուսումնասիրություն, ԼՂՀ պետական նոտարների կողմից հաստատված կտակների երկրորդ օրինակների հաշվառում և պահպանում:

ԼՂՀ նոտարական գրասենյակների կողմից 2013 թվականին կատարվել են 17.906 (21.016) նոտարական գործողություններ, որոնց դիմաց գանձվել է 21.128.400 դրամ (24.484.900) պետական տուրք:

Ըստ շրջանների նոտարական գործողությունների քանակը պատկերվում են հետևյալ կերպ

Նոտարական գրասենյակի անվանումը	գործարքների քանակը	գանձված պետտուրքը
Ստեփանակերտ թիվ 1	7.083	6.658.400
Ստեփանակերտ թիվ 2	4.604	7.311.100
Ասկերան	2.290	3.221.300
Մարտակերտ	-	-
Մարտունի	1.655	1.592.500
Հաղրութ	779	840.900
Շուշի	515	638.300
Շահումյան	-	-
Քաշաթաղ	980	865.900
Ընդամենը	17.906	21.128.400

2013 թվականին ԼՂՀ նոտարական գրասենյակները կատարել են հետևյալ նոտարական գործողությունները.

կտակների հաստատում - 203 (208)

պայմանագրերի վավերացում - 3.811 (6.439)

Այսպիսով, 2013 թվականին նոտարական գրասենյակների, ՔԿԱԳ տարածքային բաժինների և ՔԿԱԳ հանրապետական արխիվի ու ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմնի կողմից հօգուտ պետական բյուջեի գանձվել է **30.585.400** դրամ (34.002.400 դրամ) պետական տուրք:

**Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:** Ժառանգության գործերով արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ ժառանգության գործերի էլեկտրոնային բազա, որը նախատեսվում է ներդնել ՀՀ նոտարական պալատի հետ համագործակցության շրջանակներում՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նախարարության արտաբյուջետային միջոցները:

### 5. Պետական ռեգիստրի գործունեության կազմակերպում

**Արդյունքները:** 2013 թվականի ընթացքում շարունակվել է նախարարության գործունեությունը ԼՂՀ տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց պետական

գրանցման և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական հաշվառման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 131 (108) առևտրային և 21 (25) ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 4-ը (8) իրենց կարգավիճակը և հիմնադիր փաստաթղթերը համապատասխանեցրել են քաղաքացիական օրենսդրության պահանջներին (վերագրանցվել են), 301-ի (264) հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), 4-ին (3) տրվել են պետական գրանցման վկայականի կրկնօրինակ, իսկ 15-ի (11) գործունեությունը դադարեցվել է: Սահմանված կարգով պետական հաշվառման են վերցվել 4 (6) իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ, 1-ը՝ վերահաշվառվել, 22-ը՝ (15) ստացել ընթացիկ պետական հաշվառում, տրվել է 2 իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների պետական հաշվառման վկայականի կրկնօրինակ, 1 հիմնարկ և 1 առանձնացված ստորաբաժանում հանվել են պետական հաշվառումից:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 731 (819) անհատ ձեռնարկատեր, 7-ը՝ (3) վերահաշվառվել, 54-ը՝ (25) ստացել ընթացիկ պետական հաշվառում, 8-ին (7) տրվել է պետական հաշվառման վկայականի կրկնօրինակ, իսկ 37-ի (15) գործունեությունը դադարեցվել է:

Պետական ռեզիստրի կենտրոնական մարմնի կողմից գրանցվել են նաև 132 (124) ֆիրմային անվանումներ:

«Ձևագվածային լրատվության մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով 3 լրատվամիջոց հաշվառվել են վարչական ռեզիստրում:

Պետական միասնական գրանցամատյանից տրվել են 638 (737) տեղեկանքներ:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 7.522.000 դրամ (7.798.500) պետական տուրք:

Հաշվետու ժամանակահատվածում գանձվել է հատուկ թույլտվություն պահանջող ֆիրմային անվանումների օգտագործմամբ պայմանավորված 9.600.000 դրամ (9.000.000) տարեկան պետական տուրք և 3 իրավաբանական անձանց տարեկան պետական տուրքի պարտավորության ժամանակին չկատարմամբ պայմանավորված 153.000 դրամ (36.000) հաշվարկված տույժ, որի հաշվակցմամբ հաշվետու ժամանակահատվածում գանձվել է 17.275.000 դրամ (16.834.500) պետական տուրք:

Գործակալության կենտրոնական մարմնի և Ստեփանակերտի տարածքային բաժնի կողմից մատուցված վճարովի ծառայությունների արդյունքում արտաբյուջե է մտցվել 425.000 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարի հանձնարարությամբ գործակալության կողմից մշակվել և հրատարակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների տեղեկատու» գիրքը:

**Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:** Պետական ռեզիստրում ներդրված իրավաբանական անձանց պետական գրանցման տեղեկատվական համակարգը կատարելագործման կարիք ունի: Խնդիրը նախատեսվում է լուծել ՀՀ համապատասխան մարմինների հետ համագործակցության շրջանակներում՝ անհրաժեշտության դեպքում ներգրավվելով նախարարության արտաբյուջետային միջոցները: Պետական ռեզիստրի տարածքային ստորաբաժանումները համակարգչային տեխնիկայի կարիք ունեն:

## 6. Ղատական ակտերի հարկադիր կատարման ոլորտ

**Արդյունքները:** 2013 թվականին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների վարույթում գտնվել են 5571 (5163) կատարողական վարույթներ, որոնցից փաստացի կատարման հիմքով կարձվել են 1920-ը (1778), ավարտվել՝ 1821-ը (1333), կասեցվել՝ 108-ը (198), ուղարկվել տարածքային կատարման՝ 721-ը (890): Անավարտ վարույթների մնացորդը կազմել է թվով 1109 (1162) կատարողական վարույթ:

Անավարտ վարույթների մեծ քանակի մնացորդը բացատրվում է ամենամյա մուտքագրվող կատարողական թերթերի ավելացումով: Եթե նախորդ տարվա համեմատությամբ մուտք գործած կատարողական թերթերի ամսական միջին ցուցանիշը կազմում էր 344, ապա հաշվետու ժամանակաշրջանում այն կազմել է 367 կատարողական թերթ, որի տեսակարար կշիռը կազմում է 408 կատարողական թերթ, կամ 7.9%:

Բոլոր կատարողական վարույթներով բռնագանձվելիք արժեքների ընդհանուր գումարը կազմել է 3.122.135.171 դրամ (2.436.105.541), այդ թվում պետության օգտին՝ 872.038.430 դրամ (1.935.405.392):

Փաստական գանձման է ենթարկվել 802.231.899 դրամ (766.014.008), այդ թվում պետության օգտին՝ 74.994.662 դրամ (31.684.879), ֆիզիկական անձանց օգտին՝ 215.092.806 դրամ (316.622.360), իրավաբանական անձանց օգտին՝ 512.144.431 դրամ (417.706.769):

Չբռնագանձված գումարի չափը կազմում է 2.319.903.272 դրամ (1.670.091.533), այդ թվում պետության օգտին՝ 797.370.044 դրամ (1.169.391.384):

Նախորդ տարվա համեմատությամբ ընդհանուր բռնագանձված գումարի չափն աճել է 36.217.891 դրամով, իսկ պետության օգտին բռնագանձված գումարի չափը աճել է 43.309.783 դրամով:

Պետության օգտին վարկերի բռնագանձման վարույթներով բռնագանձվել է 5.570.040 դրամ (20.207.620):

**Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:** Չնայած սիստեմատիկ վերահսկողությանը և ստուգումներին, համարյա բոլոր հարկադիր կատարողների մոտ գտնվող կատարողական վարույթներում շարունակում են տեղ գտնել կատարողական գործողությունների իրականացման համար սահմանված ժամկետների խախտում, որն էլ պայմանավորված է հարկադիր կատարողների ծանրաբեռնվածության հետ: Խոչընդոտ է հանդիսանում նաև այն հանգամանքը, որ տարածքային բաժանմունքներում չկան ոչ գործավարի ոչ էլ գանձապահի հաստիքներ և այդ աշխատանքները կատարվում են հարկադիր կատարողների կողմից:

## **7. Դատական փորձաքննությունների լաբորատորիա**

**Արդյունքները:** 2013 թվականին փորձաքննությունների կատարման համար լաբորատորիայում գրանցվել է 446 մուտք (214), որից 42-ի կատարումը փախանցվել է 2014 թվական: Նախորդ տարվանից փոխանցված մուտքերի թիվը կազմել է 24:

2012 թվականի համեմատությամբ մուտքերի թիվն աճել է 2.1 անգամ, իսկ ավարտված մուտքերի քանակական աճը ավելի քան 2 անգամ: Հիմնականում մուտքերի աճ է գրանցվել ԼՂՀ ոստիկանության մարմիններից՝ 153-ով, ԴԱՀԿԾ-ից՝ 33-ով, դատարաններից՝ 23-ով:

Այսպիսով, հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիայում գրանցված 446 մուտքերից կատարմամբ ավարտվել է 391-ը, ըստ տեսակների՝ 433 փորձաքննություն, 2012 թվականի համեմատ կատարված փորձաքննությունների քանակը աճել է ավելի քան երկու անգամ:

Ըստ նախաձեռնողների մուտքերի բաշխվածության պատկերը հետևյալն է՝

1. ԼՂՀ ոստիկանության մարմիններ	- 272
2. ԼՂՀ դատախազության մարմիններ	- 18
3. ԼՂՀ դատարաններ	- 74
4. ԼՂՀ ԿԱ ՀՊԾ	- 11
5. ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿԾ	- 33
6. ԼՂՀ ԿԱ ՓԾ	- 22
7. ՀՀ զին. դատախ. և ոստիկանության մարմիններից	- 4
5. Այլ մուտքեր	- 12

Նշված մուտքերից առանց կատարման նախաձեռնողներին հետ են վերադարձվել 13 մուտքեր (6) միջնորդության չբավարարման, նախաձեռնողների կողմից համապատասխան գրությունների հիման վրա՝ առանց կատարման հետ ուղարկելու պահանջով:

Հանձնաժողովային և համալիր կարգով կատարվել են համապատասխանաբար 4 և 41, իսկ միանձնյա 346 փորձաքննություններ:

Փորձագետները հարցաքննության և դատական նիստերին մասնակցել են 28 անգամ:

Դատական փորձաքննությունների լաբորատորիայի փորձագետները ուսումնասիրել են 7495 օբյեկտներ (1980):

**Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:** Դատական փորձաքննությունների ոլորտում կարևորագույն խնդիր է հանդիսանում որոշ տեսակի փորձաքննությունների կազմակերպման գծով ԼՂՀ-ում համապատասխան որակյալ մասնագետների բացակայությունը, ինչը հնարավորություն չի տալիս ընդլայնել լաբորատորիայի կողմից իրականացվող փորձաքննությունների տեսակները:

## 8. ԼՂՀ պետական արխիվ

**Արդյունքները:** 2013 թվականին ԼՂՀ պետական արխիվի կազմա-վերականգնողական լաբորատորիայում վերականգնվել և վերանորոգվել է 2034 (2080) թերթ արխիվային փաստաթուղթ, կարվել՝ 1627 (4396) գործ, կազմապատվել՝ 1000 (780) գործ:

Ըստ արխիվի հաշվառման հիմնական փաստաթղթերի ամփոփ տվյալների՝ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԼՂՀ պետարխիվում պահպանվում է 385 արխիվային ֆոնդ՝ 75.777 արխիվային գործերով:

Տվյալների էլեկտրոնային շտեմարանի հագեցման, վերջինիս տեղեկատվական-որոնողական հնարավորությունների ընդլայնման նպատակով թվայնացվել է 67.207 արխիվային փաստաթուղթ, 22.513 անձնական քարտ, ինչպես նաև որոշակի կազմակերպչական-նախապատրաստական աշխատանքներ են տարվել արխիվի ֆոնդերի ուղեցույցի պատրաստման ուղղությամբ:

Հիմնարկ-ձեռնարկություններից և կազմակերպություններից մշտական պահպանման է ընդունվել՝ 404 (480) գործ, անձնական կազմի՝ 737 (1580) գործ, ժամանակավոր պահպանության՝ 7212 (293) գործ:

Տարվա ընթացքում փորձաքննությամբ արժեքավորման է ենթարկվել 2608 (1962) գործ, որից ցուցակագրվել է մշտական պահպանման 1236 (217) գործ, անձնակազմին վերաբերող 1337 (885), իսկ 88 (860) գործ առանձնացվել է ոչնչացման համար, քանի որ պահպանման ժամկետները սպառվել են:

Ոլորտի աշխատողների ուժերով իրականացվել է (պայմանագրային հիմունքով) մի քանի կազմակերպությունների (այդ թվում՝ ԼՂՀ «Արցախէներգո» ՓԲԸ, ԼՂՀ դատական

դեպարտամենտ, Ստեփանակերտի քաղաքապետարան և այլն) արխիվային փաստաթղթերի ու գործերի կարգավորում: Արդյունքում ձևավորվել, նկարագրվել ու ցուցակագրվել է 404 մշտական ու 737 անձնակազմին վերաբերող գործ:

Հաշվետու ժամանակաշրջանում անց է կացվել մեթոդական-փորձագիտական հանձնաժողովի 4 նիստ, քննարկվել և հաստատվել են 149 ցուցակներ՝ 14.344 պահպանվող միավորների ընդհանուր քանակով:

Հաշվետու ժամանակահատվածում արխիվը պատասխանել է քաղաքացիներից և տարբեր կազմակերպություններից ստացված (այդ թվում արտերկրից) 989 (1027) սոցիալ-իրավական բնույթի հարցումների:

**Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:** ԼՂՀ պետական արխիվը շենքային պայմանների բարելավման կարիք ունի:

## **9. Մարմնի վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշները**

Հաշվետու ժամանակաշրջանում նախարարության աշխատակազմում հաստատված հաստիքների քանակը կազմել է 105 (103), որից 48-ը (49 ) քաղծառայության պաշտոնների հաստիքներ են:

Նախարարության 2013 թվականի հաստատված բյուջեն կազմել է 191.639.600 (187.283.000) դրամ, որից՝

աշխատավարձի վարձատրություն – 142.297.300 (131.455.100)

պահպանման ծախսեր - 47.342.300 (51.827.900)

վարչական սարքավորումներ – 2.000.000 (4.000.000):

2013 թվականին նախարարությանը պատկանող ավտոմեքենաների քանակը կազմում էր թվով 8-ը, այդ թվում՝ մեկ ավտոմեքենա «Գնումների մասին» ԼՂՀ օրենքի պահանջներով սահմանված կարգով գնվել է նախարարության ԴԱՀԿ ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին:

## **10. 2014 թվականին նախատեսվող միջոցառումները**

2014 թվականին նախարարությունը շարունակելու է գործունեությունը ԼՂՀ օրենսդրության կատարելագործման և իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման ուղղությամբ և հանդես է գալու անհրաժեշտ նախաձեռնություններով:

Նախարարության գործունեության համար ուղենիշ է հանդիսանալու ԼՂՀ Սահմանադրությունը, ԼՂՀ Նախագահի նախընտրական ծրագրի դրույթները և ԼՂՀ կառավարության գործունեության 2014 թվականի միջոցառումների ծրագիրը:

2014 թվականին արդարադատության ոլորտում շարունակվելու է գործունեությունը օրենսդրական բազայի հետագա զարգացման ուղղությամբ:

Աշխատանքներ են իրականացվելու օրենսդրության ստեղծման, կատարելագործման, առկա բացերի լրացման և գործող օրենքները ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու գործընթացը շարունակելու ուղղությամբ:

Միջոցներ կծեռնարկվեն ԼՂՀ իրավական տեղեկատվական «Arlexis» համակարգի զարգացման ուղղությամբ: 2013 թվականի ապրիլ ամսում ԼՂՀ-ում ներդրվել է «Arlexis» իրավական տեղեկատվական անվճար համակարգը, որը ներկայումս պարունակում է ԼՂՀ-ում ընդունված բոլոր օրենսգրքերի և օրենքների էլեկտրոնային բազան: Համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ անհրաժեշտ է համակարգում ընդգրկել նաև ԼՂՀ-ում ընդունված այլ իրավական նորմատիվ ակտերը, ինչի կապակցությամբ

աշխատանքներ կիրականացվեն ԼՂՀ նախագահի հրամանագրերի, ԼՂՀ Ազգային ժողովի և ԼՂՀ կառավարության որոշումների «Arlexis» համակարգում ներմուծման ուղղությամբ:

Շարունակվելու է գործունեությունը դատաիրավական համակարգի գործունեության հետագա կատարելագործման ուղղությամբ: Դատաիրավական բարեփոխումների ծրագրին համապատասխան կմշակվեն և ԼՂՀ Ազգային ժողովի քննարկմանը կներկայացվեն ԼՂՀ դատական և դատավարական օրենսգրքերում փոփոխություններ նախատեսող ԼՂՀ օրենքների նախագծերի փաթեթները:

Կատարելագործվելու են դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկելու համար որակավորման ստուգման կարգը, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման, դատավորների, դատախազների, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման ընթացակարգերը:

Համագործակցելով ՀՀ համապատասխան կառույցների հետ, միջոցներ կծեռնարկվեն նաև դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց և փաստաբանների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման արդյունավետ համակարգի ներդրման ուղղությամբ:

Արդարադատության համակարգում իրականացվելիք բարեփոխումների ուղղություններից է լինելու անվճար իրավաբանական օգնության ինստիտուտի կատարելագործումը, հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունների հզորացումը:

Նախարարության խնդիրներից մեկը բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարձրացումն է, հետևաբար, աշխատանքներ կտարվեն՝ վերացնելու այն գործառույթները, որոնք ստեղծում են բյուրոկրատական քաշքշուկ և անհարմարություն՝ քաղաքացիների համար:

Նոտարիատի, քաղաքացիական կացության ակտերի և իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտներում վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու, ժամկետները կրճատելու և քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմաններ սահմանելու նպատակով նախարարությունը հանդես կգա անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնություններով:

Շարունակվելու են նախարարության ստորաբաժանումներում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և գործառույթների ավտոմատացման գործընթացները:

Գործարկվելու է քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային նոր համակարգը: Նշված համակարգը հնարավորություն է տալիս զգալիորեն բարելավել մատուցվող ծառայությունների որակը: Համապատասխան օրենսդրական փոփոխություններից և տեղեկատվական համակարգի տեղակայումից հետո քաղաքացիների համար կնվազի վարչական բեռը, կբարելավվի տվյալների բազայի և տեղեկատվական համակարգի անվտանգությունը, առավել կպահպանվեն քաղաքացիների շահերը:

Պետական ռեգիստրում կներդրվի էլեկտրոնային համակարգ, որը թույլ կտա նախկինում ընկերությունը գրանցելու համար տարբեր մարմիններ այցելելու փոխարեն այցելել միայն մեկ կառույց՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում գործող իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալություն, որն ապահովելու է ֆիրմային անվանման, հարկային հաշվառման համարի, ապահովադրի հաշվառման համարի տրամադրումը, ինչպես նաև պետական գրանցումը կամ հաշվառումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ գործընթացները: Ընդ որում ինտերնետային կայքի միջոցով գործակալության կողմից մատուցվող ծառայությունը հասանելի է դարձվելու էլեկտրոնային եղանակով: Համակարգը հնարավորություն է տալու գրանցել իրավաբանական անձ /հաշվառել անհատ

ձեռնարկատեր/ հաշված թույլների ընթացքում՝ գործընթացի ժամանակատարությունը հասցնելով նվազագույնի:

Ակտիվացվելու է համագործակցությունը ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ համապետական խնդիրների լուծման գործում նրանց ներգրավելու նպատակով: Հասարակական միավորումների և զանգվածային լրատվության միջոցների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվելու են նոր մեխանիզմներ:

Շարունակվելու է ակտիվ համագործակցությունը ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ:

Միջոցներ են ձեռնարկվելու նաև այլ երկրների արդարադատության մարմինների հետ կապերի և փոխհարաբերությունների հաստատման ուղղությամբ:

**ԼՂՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ**